



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Պ Ե Տ

«19» փետրվարի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Անանյան

ԳԲԽ-08/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի 05.02.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 05.02.2016թ. ներկայացված բողոքով «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հաշվապահական հաշվառման վարման ծառայությունների ձեռքբերման նպատակով

25.12.2015թ. հայտարարվել է «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-31/15» ծածկագրով պարզեցված ընթացակարգ:

Ի թիվս այլ ընկերությունների՝ գնման ընթացակարգին 29.12.2015թ-ին մասնակցել է նաև «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն:

2016թ. դեկտեմբերի 29-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ որպես երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն (գնային առաջարկը՝ 14.250.000 ՀՀ դրամ):

2016թ. հունվարի 13-ի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ին՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը, կցելով նախկինում հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերի պատճենները, տվյալ պայմանագրի կողմերի հաստատված պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրությունների և այլն) պատճենները, կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունված կողմի գրավոր հավաստումը, միաժամանակ ներկայացնելով ծառայություն մատուցող խմբի գլխավոր հաշվապահի վերաբերյալ տեխնիկական բնութագրում նշված պահանջները հիմնավորող փաստաթղթերը:

2016թ-ի հունվարի 19-ի թիվ 5 արձանագրության 1.2 կետով Հանձնաժողովը որոշել է պահանջել «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հաշվապահական խմբի գլխավոր հաշվապահի աշխատանքային գրքույկի պատճենը:

2016թ. հունվարի 22-ին թիվ 6 արձանագրության 1 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված հինգ պայմանագրերից միայն երեքն են համապատասխանում «Մասնագիտական փորձառություն» չափանիշին՝ «Գրին Ֆարմ» ՍՊԸ-ի, «Աստի Թրեյդինգ» և «Գրադինվեստ» ՍՊ ընկերությունների պայմանագրերը: «Գրին Ֆարմ» ՍՊԸ-ի պայմանագրով «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն բացի հաշվապահական հաշվառման վարման ծառայություն մատուցելուց, մատուցել է նաև այլ ծառայություն, 2-րդ ենթակետի համաձայն՝ «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ին երկայացված փաստաթղթերը նախագծի ծառայությունը մատուցող խմբի գլխավոր հաշվապահի վերաբերյալ չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին, 1.1. կետի

համաձայն՝ հանձնաժողովը որոշեց «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի հայտը համարել «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-31/15» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի երկրորդ գլխի «Մասնագիտական փորձառություն» չափանիշին չբավարարող և մերժել:

Ընկերությունը հայտնել է նաև, որ Հրավերի համաձայն «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն 1 պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում հաշվապահական հաշվառման վարման (աուքսոր-սինիգային) ծառայությունների մատուցումը և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում **կատարած** պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ **տվյալ** պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Իսկ նույն բաժնի 3-րդ կետի համաձայն՝ մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջին ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագրի համաձայն՝ «...վերոհիշյալ աշխատանքները իրականացնող աշխատակազմի գլխավոր հաշվապահը պետք է ունենա բարձրագույն ֆինանսական կրթություն, առնվազն 5 տարվա հաշվապահական ստաժ, հաշվապահական միջազգային ստանդարտների որակավորումով»:

Ընկերությունը հայտնել է, որ «Գրին Ֆարմ Պլյուս» ՍՊԸ ընկերությունը 19.03.2014թ.-ին օրենսդրությամբ սահմանված կարգով անվանափոխվել է «Եվրո Թրեյդ» ՍՊԸ-ի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: ...Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

2016թ. հունվարի 22-ի թիվ 6 արձանագրության 1 կետի համաձայն՝ «Նեցուկ-ԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված հինգ պայմանագրերից միայն երեքն են համապատասխանում «Մասնագիտական փորձություն» չափանիշին՝ «Գրին Ֆարմ» ՍՊԸ-ի, «Աստի Թրեյդինգ» և «Գրադինվեստ» ՍՊԸ ընկերությունների պայմանագրերը: «Գրին Ֆարմ» ՍՊԸ-ի պայմանագրով «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն, բացի հաշվապահական հաշվառման վարման ծառայություն մատուցելուց, մատուցել է նաև այլ ծառայություն:

Ընկերությունը պնդում է, որ Հանձնաժողովին ներկայացված «Գրին Ֆարմ» և «Նեցուկ-Աս» ՍՊԸ ընկերությունների միջև 31.05.2013թ. կնքված Վճարովի ծառայությունների N 02-ի պայմանագրի 1.1 կետի համաձայն Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը հանձն է առնում հատուցման դիմաց վարել պատվիրատուի **հաշվապահական հաշվառումն** ըստ ներկայացված փաստաթղթերի,

ինչն էլ ըստ էության տեղի է ունեցել և հաստատվում է Հանձնաժողովին ներկայացված հարկային հաշիվներով: Հետևաբար, այն դիրքորոշումը, որ իբրև «Գրին Ֆարմ» և «Նեցուկ-Աս» ՍՊ ընկերությունների միջև 31.05.2013թ. կնքված Վճարովի ծառայությունների N 02 պայմանագրով «Նեցուկ-ԱՍ» ՍՊԸ-ն, բացի հաշվապահական հաշվառման վարման ծառայություն մատուցելուց, մատուցել է նաև այլ ծառայություն, զուրկ է որևէ իրավական և փաստական հիմնավորումից:

Ընկերությունը անդրադառնալով այն հանգամանքին, որ «Նեցուկ-ԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված հինգ պայմանագրերից միայն երեքն են համապատասխանում «Մասնագիտական փորձություն» չափանիշին, նշել է, որ անհասկանալի է հանձնաժողովի դիրքորոշումը, քանի որ վերջինս որևէ կերպ չի նշել, թե մյուս պայմանագրերը ինչով չեն համապատասխանում այդ չափանիշներին, որպեսզի հնարավոր լիներ ներկայացնել հակափաստարկ կամ ընդունել հանձնաժողովի դիրքորոշումը:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական ակտ է սույն հոդվածի առաջին մասում նշված մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած իրավական այն ակտը, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկ անգամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ և սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական կամ համայնքային հիմնարկների (այսուհետ՝ անձ) համար:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ իրավական ակտը պետք է լինի լիակատար, ավարտված և լիովին կարգավորի ակտով նախատեսված հարաբերությունների բոլոր առանձնահատկությունները:

Ընկերության պնդմամբ, այս դեպքում թիվ 6 արձանագրությունը, որպես անհատական իրավական ակտ, լիակատար, ավարտված և հիմնավորված չէ, ավելին, Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

«Նեցուկ-Աս» ՍՊԸ-ի կողմից 26.01.2016թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով գրություն է հղվել Հանձնաժողովի քարտուղար Ա.Պետրոսյանին՝ խնդրելով

պարզաբանել, թե կոնկրետ որոնք են «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 31/15» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի 2-րդ գլխի «Մասնագիտական փորձառության» այն չափանիշը կամ չափանիշները, որոնց, «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 31/15» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 6 արձանագրության 1.1. կետի համաձայն՝ չի բավարարում «Նեցուկ-Աս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը, ինչը և հիմք է հանդիսացել հայտի մերժման համար:

Հանձնաժողովի քարտուղար Ա.Պետրոսյանի կողմից մինչ օրս որևէ պատասխան հիշյալ գրությանը օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերությունը չի ստացել:

Ընկերությունը նշում է, որ Հանձնաժողովի որոշումը, չունենալով կոնկրետ հիմնավորումներ մերժման մասին, կայացվել է վերը նշված իրավական նորմերի պահանջների խախտումով:

Ընկերությունը հայտնում է, որ Հանձնաժողովի թիվ 6 Արձանագրության 1 կետով նշված երեք պայմանագրերից բացի, ներկայացվել են և, ըստ Հանձնաժողովի, «Մասնագիտական փորձառություն» չափանիշին չհամապատասխանող համարված «Գրին Ֆարմ Պլյուս» ՍՊԸ-ի և «Եր. Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրերը:

Ընկերությունը նշել է նաև, որ Հանձնաժողովի անդամների հետ 25.01.2016թ-ին կայացած հեռախոսազանգով զրուցելուց հետո պարզ է դարձել, որ Ընկերության կողմից ներկայացված թվով 2 «չհամապատասխանող» որակված պայմանագրերից մեկի մասով անհամապատասխանություն են համարել այն հանգամանքը, որ ընկերության կողմից ներկայացված «Գրին Ֆարմ Պլյուս» ՍՊԸ-ի պայմանագիրը կնիքված է «Եվրո Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից: Այդ կապակցությամբ Ընկերությունը հայտնել է, որ «Գրին Ֆարմ Պլյուս» ՍՊԸ-ն անվանափոխվել է և այժմ անվանվում է «Եվրո Թրեյդ» ՍՊԸ:

Տվյալ դեպքում, «Նեցուկ-Աս» ՍՊԸ-ն, չգտնելով երկկողմանի հաստատված պայմանագրի օրինակը, որը այս պահին արդեն գտնվել է և բողոքին կից ներկայացվել, դիմել է «Եվրո Թրեյդ» ՍՊԸ-ին, որն, ինչպես արդեն նշվել է, հանդիսանում է նույն «Գրին Ֆարմ Պլյուս» ՍՊԸ Ընկերությունը, տրամադրելու իրենց միջև կնքված պայմանագրի կրկնօրինակ, սակայն վերջինս համակարգչում առկա պայմանագիրը տպելուց հետո հաստատել է իր մոտ այդ պահին գտնվող կնիքով, որի վրա կազմակերպության անվանումը, կատարված անվանափոխության հետևանքով, բնականաբար, նշված է «Եվրո Թրեյդ»:

Ըստ Ընկերության՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված Ընկերության հայեցողական պարտականությունը (Ընկերությունը կարող է ունենալ կլոր կնիք), ուժը կորցրել է 19.03.2012թ-ին: Հետևաբար, պայմանագրերի կնիքով կնքումը, օրենքի համաձայն, չի հանդիսանում պարտադիր վավերապայման: Ուստի այդ կնիքի վրա նշված կազմակերպության հին կամ նոր անունը չէր կարող էական նշանակություն ունենալ գործարքի կատարված լինել կամ չլինելու առումով:

Ընկերության պնդմամբ, բացի պայմանագրից, որպես մատուցված ծառայությունը հիմնավորող փաստաթուղթ Հանձնաժողովին ներկայացվել էին նաև հարկային հաշիվներ, որոնք ուղղակիորեն փաստում են մատուցված ծառայության իսկությունը և, բնականաբար, չհամապատասխանող որակված պայմանագրի իրավական առկայությունը: Հարկային հաշիվները պարունակում են պայմանագրի բոլոր էական պայմանները՝ պայմանագրի կողմերը, գինը, առարկան և այլն, ինչը լրիվ բավարար է ծառայության մատուցման հանգամանքը փաստելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից:

Օրենքի հիշյալ հոդվածի վերլուծությունից ընկերությունը հանգել է այն եզրակացությանը, որ Կողմերի միջև իրավահարաբերությունների առկայությունը պարզելու համար բավարար է բովանդակությունն արտահայտող փաստաթղթի ստորագրումը, որևէ ուղիղ պահանջ նման բովանդակությունը արտահայտելու գրավոր կնքված պայմանագրի միջոցով առկա չէ: Հետևաբար, կողմերի միջև իրավահարաբերությունների և մատուցված ծառայությունների հավաստման համար գրավոր կնքված պայմանագիր ներկայացնելը չի կարող դիտվել որպես պարտադիր պայման, եթե առկա է այլ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված փաստաթուղթ, որը հավաստում է հիշյալ իրավահարաբերությունների (գործարքի կատարված լինելու) բովանդակությունը: Հետևաբար, որպես Պատվիրատուին ծառայության մատուցումը հավաստող փաստաթուղթ բավարար էր միայն դուրս գրված հարկային հաշիվների ներկայացումը: Այդուհանդերձ, «Նեցուկ-Աս» ՍՊԸ կողմից ներկայացվել են նաև երկկողմանի ստորագրված պայմանագրերի պատճենները՝ ընդամենը գործընկերոջ կողմից կնիքված տվյալ պահին իր մոտ առկա կնիքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը»:

Անգամ, եթե հանձնաժողովի անդամը գտնում էր, որ ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, ապա վերջինս գոնե պետք է ղեկավարվեր կարգի 51-րդ հոդվածով և մեկ աշխատանքային օրվա ընթացքում առաջարկեր «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ին շտկել անհամապատասխանությունը, որը ակնհայտորեն չի կատարվել, քանի որ 19.01.2016թ. արձանագրության 1.2. բաժնում, «Նեցուկ Աս» ՍՊԸ-ից պահանջվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել միայն հաշվապահի աշխատանքային գրքույկի պատճենը:

Ընկերությունը նշել է, որ հանձնաժողովի 2016թ. հունվարի 22-ի թիվ 6 արձանագրության 1-ին կետում նշված դիրքորոշումը կայացվել է օրեսնդրության պահանջների սխալ մեկնաբանման, սխալ կիրառման և խախտումների հետևանքով:

Անդրադառնալով «Եր. Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Նեցուկ-Աս» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրին, որի վերաբերյալ հանձնաժողովը կրկին բանավոր հայտնել է, որ չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, քանի որ պայմանագրի առարկան հաշվապահական խորհրդատվություն է և ոչ թե հաշվապահական վարման ծառայություն, Ընկերությունը հայտնել է, որ չնայած չի ընդունում այդ դիրքորոշումը, սակայն լայնածավալ բողոք չներկայացնելու համար՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերի գնային արժեքների հանրագումարը արդեն իսկ գերազանցում է սահմանված նվազագույն չափը, ուստի չի անդրադարձել այդ փաստարկին:

2016թ. հունվարի 22-ին թիվ 6 արձանագրության 2 կետի համաձայն՝ «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը նախագծի ծառայությունը մատուցող խմբի

Գլխավոր հաշվապահի վերաբերյալ չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին:

Ընկերությունը նշել է, որ արձանագրության մեջ առկա չէ որևէ հիմնավորում, թե մասնավորապես որ փաստաթուղթը չի համապատասխանում, կամ հատկապես ինչ մասով չի համապատասխանում տեխնիկական բնութագրի պահանջներին: Այսինքն, առկա է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի խախտումներ:

Հրավերի տեխնիկական բնութագրի համաձայն՝ գլխավոր հաշվապահը պետք է ունենա բարձրագույն ֆինանսական կրթություն, առնվազն 5 տարվա հաշվապահական ստաժով, հաշվապահական միջազգային ստանդարտի որակավորումով: «Նեցուկ-ԱՍ» ՍՊԸ կողմից ներկայացված փաստաթղթերում որպես Գլխավոր հաշվապահ ներկայացվել է Ավետիք Մովսիսյանը: Հանձնաժողովին ներկայացվել է Ավետիք Մովսիսյանին տրված թիվ D-0008 դիպլոմը, ինչը հավաստում է վերջինիս բարձրագույն ֆինանսական կրթությունը:

Հանձնաժողովին ներկայացվել է նաև Ավետիք Մովսիսյանի աշխատանքային գրքույկը՝ աշխատանքային ստաժը հավաստող տվյալներով: Աշխատանքային գրքույկից բացի, Հանձնաժողովին են ներկայացվել Ավետիք Մովսիսյանի կողմից կնքված ծառայությունների մատուցման պայմանագրեր, որոնք փաստում են վերջինիս կողմից հաշվապահական ծառայությունների մատուցման և մասնագիտական փորձառության առավել քան 5 տարվա ստաժի մասին:

ՀԱՍՏԻՔ	ՍԿԻԶՔ	ԱՎԱՐՏ
Դասախոս	01.09.2001	31.12.2002
Դասախոս	02.05.2008	31.05.2008
Դասախոս	01.09.2008	31.01.2009
Դասախոս	02.05.2009	30.06.2009
Դասախոս	01.09.2009	30.12.2009
Դասախոս	01.02.2010	մինչօրս
Գործադիր տնօրենի խորհրդական	22.12.2015	26.12.2015
Մեթոդոլոգ	18.11.2013	
Դասախոս	13.11.2014	02.12.2014
Դասախոս	01.07.2014	20.08.2014

Դասախոս	09.07.2013	25.08.2013
Դասախոս	01.07.2015	30.07.2015
ՖՀՄՍ վերանայման ծառայություն	02.03.2009	21.09.2009
հաշվետվությունների բաժնի գլխավոր մասնագետ	20.10.2015	18.12.2015
Դասախոս	18.02.2012	27.03.2012
ՖՀՄՍ խորհրդատու	01.04.2014	
ՖՀՄՍ խորհրդատու	27.12.2013	
Գլխավոր մասնագետ խորհրդատու	16.01.2012	01.04.2012

Հանձնաժողովին ներկայացվել է նաև Ավետիք Մովսիսյանի ACCA միջազգային ֆինանսական հաշվառման որակավորման դիպլոմը՝ տրված 2011թ-ի հունիսին:

Կրկին հանձնաժողովի անդամների հետ բանավոր քննարկումների արդյունքում պարզ է դարձել, որ քանի որ Ավ. Մովսիսյանը հանդիսանում է հաշվապահական հաշվառման գծով դասախոս, ուստի այդ մասով հայտը ենթակա է մերժման, քանզի հաշվապահական հաշվառման գծով դասախոսի ստաժը Հանձնաժողովը մասնագիտական ստաժ չի համարել:

Աշխատանքային օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «...աշխատանքային ստաժը կարող է լինել՝...մասնագիտական աշխատանքային ստաժ, որում հաշվարկվում են այն ժամանակահատվածները, որոնց ընթացքում կատարվել է քաղաքացու կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին վկայականում նշված մասնագիտությամբ աշխատանք...»:

Ավելին, ՀՀ կառավարության 2003թ.-ի օգոստոսի 8-ի N 1048 «ՀՀ-ում Հաշվապահների որակավորման կարգը հաստատելու մասին» որոշման Հավելվածի 4-րդ կետի երկրորդ պարբերության համաձայն՝ **մասնագիտական աշխատանքներ են համարվում** հաշվապահական հաշվառման, ֆինանսական, հարկային, աուդիտորական, տնտեսագիտական բնույթի, ինչպես նաև նշված բնագավառներում մեթոդաբանի, փորձագետի, վերահսկչի, խորհրդատուի, գիտական աշխատողի, **դասախոսի**, մասնագետի աշխատանքները:

Ստացվում է, որ նույնիսկ հաշվապահի որակավորման համար տվյալ բնագավառում դասախոսի աշխատանքը հիմք է հանդիսանում մասնագիտական ստաժի հաշվարկման համար:

Հետևաբար, Ընկերությունը անհիմն է համարել Հանձնաժողովի եզրակացությունն այն, որ նախագծի ծառայությունը մատուցող խմբի գլխավոր հաշվապահի վերաբերյալ փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին, իսկ, եթե հանձնաժողովը գտնում էր, որ առկա է անհամապատասխանություն, ապա վերջինս պարտավոր էր առաջնորդվել կարգի 51-րդ կետով «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում առաջարկեր շտկել անհամապատասխանությունը, ինչը կրկին չի կատարել, թույլ տալով կոպիտ խախտում:

Ընկերությունը հայտնել է, որ «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հաշվապահական հաշվառման վարման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՐԶԷԿ-ՊԸԾԶԲ-31/15» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունվարի 22-ին թիվ 6 արձանագրությամբ սխալ է մեկնաբանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ՀՀ կառավարության 2003թ.-ի օգոստոսի 8-ի N1048 «ՀՀ-ում հաշվապահների որակավորման կարգը հաստատելու մասին» որոշման Հավելվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությունը, հաշվի չի առնվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի պահանջները և խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 10.02.2011թ. որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 51-րդ հոդվածի պահանջները, որոնք հանգեցրել են «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի իրավունքների ոտնահարմանը և խոչընդոտներ են ստեղծել հավասար պայմաններում մրցակցությանը մասնակցելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ և 48-րդ հոդվածներով՝ Ընկերությունը պահանջել է դադարեցնել «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հաշվապահական հաշվառման վարման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՐԶԷԿ-ՊԸԾԶԲ-31/15» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունվարի 22-ին թիվ 6 արձանագրության 1.1 և 1.2 կետերով կայացված որոշումը և որպես միջանկյալ ընթացակարգ՝ կասեցնել «ԵՐԶԷԿ-ՊԸԾԶԲ-31/15» ծածկագրով պարզեցված ընթացակարգի շրջանակներում կայացված ցանկացած այլ որոշման գործողությունը:

2. «Երևան Զերմաէլէկտրակէնտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Երևան Զերմաէլէկտրակէնտրոն» ՓԲԸ-ն 18.02.2016թ. թիվ 88 գրությամբ հայտնել է, որ «Երևան Զերմաէլէկտրակէնտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հաշվապահական հաշվառման վարման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՐԶԷԿ-ՊԸԾԶԲ 31/15» ծածկագրով պարզեցված ընթացակարգին հայտ ներկայացրած հինգ մասնակիցների հետ միասին, հայտ է ներկայացրել նաև «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն, որը համաձայն իր գնային առաջարկի՝ 14250000 ՀՀ դրամ, զբաղեցրել է երկրորդ տեղը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը մերժվել է՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված եզրակացության հիման վրա: Գնահատող հանձնաժողովի 2016թ.ի հունվարի 13-ի նիստով որոշում է կայացվել ծանուցել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ին, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը, կցելով նախկինում իրականացված պայմանագրերի պատճենները, և այդ պայմանագրերի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի պատճենները:

«Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն 2016թ.-ի հունվարի 19-ին ներկայացրել է հավելված 5-ով պահանջվող փաստաթղթերը, այդ ժամանակ գնահատող հանձնաժողովը ընկերությունից պահանջել է լրացուցիչ ներկայացնելու որպես խմբի գլխավոր հաշվապահ ներկայացված՝ Ավետիք Մոլվսիսյանի աշխատանքային գրքույկի պատճենը:

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակցի կողմից ներկայացված նյութերը, փաստել է, որ՝

- ներկայացված հինգ պայմանագրերից երկուսը՝ «Գրին Ֆարմ» և «Աստի թրեյդինգ» ՍՊ ընկերությունների հետ կնքված պայմանագրերը, համապատասխանում են հրավերի պահանջներին: Այդ երկու պայմանագրերով մատուցված ծառայությունների գումարը կազմում է համապատասխանաբար՝ 1950000 և 780000 ՀՀ դրամ:

- «Երևանի Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հետ պայմանագիրը խորհրդատվության մատուցուման պայմանագիր է, այսինքն հաշվապահական հաշվառման վարման պայմանագիր չէ և չի կարող դասվել հրավերով պահանջվող նմանատիպ պայմանագրերի շարքին:

- «Գրադինվեստ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի առարկան կազմված է երկու մասից, դրանք են՝ հաշվապահական հաշվառման վարման և հաշվապահական

մացորդների վերլուծության ծառայությունների մատուցում, համաձայն այդ պայմանագրի վճարման կարգի՝ յուրաքանչյուր ամիս «Գրադինվեստ» ՍՊԸ-ն «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ին հաշվապահական հաշվառման վարման համար պետք է վճարի ամսեկան 200 000 ՀՀ դրամ, իսկ հաշվապահական մացորդների վերլուծության համար՝ 400000 ՀՀ դրամ, որը իր մեջ ներառում է նաև հաշվապահական հաշվառման համար նախատեսված գումարը:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով, ինչպես նաև «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ 31/15» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջները, «Գրադինվեստ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի առարկայի 1.2 կետով նախատեսված աշխատանքները չի համարել Հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» չափանիշում նշված համանման, նմանատիպ պայմանագրով կատարված աշխատանք: Համաձայն սույն պայմանագրի վերաբերյալ 2014թ. հունիսի 30-ին «Գրադինվեստ» և «Նեցուկ ԱՍ» ՍՊ ընկերությունների մատուցման ողջ գումարը կազմել է 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ: «Գրադինվեստ» ՍՊԸ-ին ներկայացված հարկային հաշիվներից երկուսում 2013թ. հուլիս և օգոստոս ամիսների համար, «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն ներկայացրել համապատասխանաբար 600000 և 400000 ՀՀ դրամ հարկային հաշիվներ: Տարանջատելով վերը նշված պայմանագրի առարկայի երկու կետերը, ստացվում է, որ պայմանագրի առարկայի 1.1 կետով հաշվապահական հաշվառման վարման մատուցված ծառայությունների գումարը կազմում է 2500000 ՀՀ դրամ իսկ 1.2 կետով մատուցված ծառայությունների գումարը կազմում է 500000 ՀՀ դրամ:

• «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն ներկայացրել է նաև «Գրին ֆարմ պլյուս» ՍՊԸ-ի հետ կտրված պայմանագիրը, որը կնիքված է եղել «Եվրո Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից: Քանի որ, ըստ ներկայացված փաստաթղթերի, պարզ է դարձել, որ «Եվրո Թրեյդ» ՍՊԸ-ն վերոնշյալ պայմանագրի կողմ կարող էր դառնալ միայն 2014թ. մարտից, ուստի ակնհայտ է, որ Հանձնաժողովին ներկայացված վերոնշյալ պայմանագիրը կազմվել է 2014թ. մարտից

հետո, իսկ ինչպես հետագայում է պարզվել, «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի 6-րդ էջի երկրորդ պարբերությունից՝ 2015թ. դեկտեմբերին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծառայությունների վճարողվի մատուցման պայմանագիրը կնքվում է գրավոր, իսկ 296-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից:

Պատվիրատուն ակնհայտ է համարել, որ «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրին ներկայացված գրավոր բողոքից Հանձնաժողովին էր ներկայացվել պայմանագիր, որը փաստացի ստորագրվել և կնքվել էր 2015թ. դեկտեմբերին:

Ներկայացված հարկային բոլոր հաշիվներում նշված է հաշվապահական ծառայություն, այլ ոչ թե հաշվապահության վարում, ինչպես օրինակ «Գրադինվեստ» կամ «Աստի Թրեյդինք» ՍՊ ընկերությունների հարկային հաշիվներում: Սակայն Հանձնաժողովին ներկայացված վորոնշյալ պայմանագրով պետք է իրականացվեր հաշվապահության վարում: Ներկայացված հարկային հաշիվներում նշված չէ, թե որ պայմանագրի կատարման համար են ներկայացված հարկային հաշիվները:

Քանի որ Հանձնաժողովին էր ներկայացվել պայմանագիր, որը կնքվել էր «Գրին Ֆարմ պլուս» և «Նեցուկ ԱՍ» ՍՊ ընկերությունների միջև, սակայն կնիքվել էր «Եվրո թրեյդ» ՍՊԸ-ի կնիքով, որի կնքման օրն էր 31.05.2013թ., սակայն ստորագրվել և կնքվել էր միայն 2015թ. դեկտեմբերին, որի առարկան հաշվապահության վարումն էր, իսկ ըստ ներկայացված հաշիվները՝ հաշվապահական ծառայության մատուցումն է:

Ուստի, Պատվիրատուն, հաշվի առնելով վերագրյալը, որոշել է, որ վերոնշյալ պայմանագիրը չի կարող դասվել նմանատիպ պայմանագրերի շարքին:

«Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն, որպես Պատվիրատուի մոտ հաշվառման վարման ծառայություններ մատուցող խմբի գլխավոր հաշվապահ է ներկայացրել Ավետիք Մովսիսյանին, որը համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի պետք է ունենար բարձրագույն ֆինանսական կրթություն և հինգ տարվա գլխավոր հաշվապահի աշխատանքային ստաժ: Համաձայն «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ Ավետիք Մովսիսյանը 2000թ. ավարտել է «Հաշվապահական ուսուցում միջազգային կետնրոն» կրթական հիմնադրամի հետավարտական դասընթացը և

առաջել հաշվապահի որակավորում: Քանի որ վերը նշված կրթական հիմնադրամը մագիստրական կրթության լիցենզիա է ստացել միայն 2005թ. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2005թ. 03Ա/Ք հրամանով և հավատարմագրվել է 2007թ., ուստի 2000թ. ՆԴ-00-06 դիպլոմը չի հանդիսանում օրենքով սահմանված բարձագույն կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ:

Վերոնշյալը փաստվել է նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության 2016թ. փետրվարի 10-ի թիվ 04/06.1/10022-16 գրությամբ:

Ավետիք Մովսիսյանի աշխատանքային գրքույկի պատճենից երևում է, որ նա չունի հինգ տարվա հաշվապահի ստաժ: Այսինքն, ներկայացված անձը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրով գլխավոր հաշվապահի համար ներկայացվող պահանջներին:

«Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ին ուղղարկված պարզաբանման մեջ նշվել են այն հիմքերը, որոնց վրա հենվելով՝ գնահատող հանձնաժողովը որոշել է, որ Ավետիք Մովսիսյանը չունի համապատասխան բարձագույն կրթություն և անվազն 5 տարվա հաշվապահի ստաժ:

Միաժամանակ Պատվիրատուն նշել է, որ ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի «Հաշվապահների որակավորման կարգը հաստատելու մասին» թիվ 1048 որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետը սահմանում է՝ նույն կարգի կիրառման նպատակով մասնագիտական աշխատանքներ են համարվում հաշվապահական հաշվառման, ֆինասնական, հարկային, աուդիտորական, տնտեսագիտական բնույթի, ինչպես նաև նշված բնագավառներում մեթոդաբանի, փորձագետի, վերահսկչի, խորհրդատուի, գիտական աշխատողի, դասախոսի, մասնագետի աշխատանքները:

Գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի պահանջներով, որի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ԵՐՋԷԿ ՊԸԾՁԲ 31/15» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի առաջին մասի երկրորդ գլխի 2.3 կետով սահմանված մասնագիտական փորձառություն չափանիշի համար գրված է հետևյալը՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատում է հետևյալ կարգով՝

1. Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման առնվազն 1 պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում հաշվապահական հաշվառման վարման (աուստրոսինգային) ծառայությունների մատուցումը:

2. «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված պայմանագրերի հանրագումարը պետք է լիներ նրա գնային առաջարկի՝ 14250000 ՀՀ դրամի, 50%-ից ոչ պակաս, այսինքն 7125000 ՀՀ դրամ: Ելնելով վերը նշվածից՝ «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հինգ պայմանագրերից նմանատիպ պայմանագրեր են՝ «Գրին ֆարմ», «Աստի թրեյդինգ» և մասամբ «Գրադինվեստ» ՍՊ ընկերությունների հետ կնքված պայմանագիրը, այդ երեք պայմանագրերով հաշվապահական հաշվառման վարման ծառայությունների մատուցման ընդհանուր գումարը կազմում է 5230000 ՀՀ դրամ, միաժամանակ «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն պետք է ներկայացներ նախկինում կատարած մեկ պայմանագիր, որով նմանատիպ ծառայությունների մատուցման գումարը պետք է կազմեր ներկայացված գնային առաջարկի 20%-ից ոչ պակաս, այն է՝ 2850000 ՀՀ դրամ: Վերը նշված պայմանագրերից ոչ մեկը, որպես նմանատիպ ծառայությունների մատուցման պայմանագիր, չի բավարարում այդ պահանջը:

3. Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, 2016թ. հունվարի 22-ին որոշել է հետևյալը՝ համաձայն գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների, «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի հայտը համարել «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁ 31/15» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի 2-րդ գլխի «Մասնագիտական փորձառություն» չափանիշին չբավարարող և մերժել:

4. «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն իր բողոքում նշել է, որ էլեկտրոնային փոստի միջոցով դիմել էր՝ խնդրելով ներկայացնել գլխավար հաշվապահի տեխնիկական բնութագրի պահանջներին չբավարարելու վերաբերյալ պարզաբանում, որին 2016թ. հունվարի 29-ին

էլեկտրոնային փոստով ուղարկվել է պատասխան և «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի պնդումը այն մասին, որ մինչ օրս պարզաբանում չեն ստացել, անհիմն է:

3. ԳԲԽ-08/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-08/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևան Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված կողմից կազմակերպված «ԵՐԶԷԿ-ՊԸԾԶԲ-31/15» ծածկագրով պարզեցված ընթացակարգին **29.12.2015թ.** մասնակցության հայտ է ներկայացրել «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն:

2. «Երևան Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԵՐԶԷԿ-ՊԸԾԶԲ-31/15» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածի՝ **տեխնիկական բնութագրի համաձայն՝ «...վերոհիշյալ աշխատանքները իրականացնող աշխատակազմի գլխավոր հաշվապահը պետք է ունենա բարձրագույն ֆինանսական կրթություն, առնվազն 5 տարվա հաշվապահական ստաժ, հաշվապահական միջազգային ստանդարտների որակավորումով»:**

3. Գնահատող հանձնաժողովի 29.12.2015թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2.2 կետով կայացված որոշման համաձայն՝ որպես երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն (գնային առաջարկը՝ 14.250.000 ՀՀ դրամ):

4. Գնահատող հանձնաժողովի 13.01.2016թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը, կցելով նախկինում հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրերի պատճենները, տվյալ պայմանագրի կողմերի հաստատված պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրությունների և այլն) պատճենները, կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը՝ միաժամանակ ներկայացնելով ծառայություն մատուցող խմբի գլխավոր

հաշվապահի վերաբերյալ տեխնիկական բնութագրում նշված պահանջները հիմնավորող փաստաթղթերը:

5. Գնահատող հանձնաժողովի 19.01.2016թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով Հանձնաժողովը որոշել է «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ից պահանջել **մեկ աշխատանքային օրվա ներկայացնելու հաշվապահական խմբի գլխավոր հաշվապահի աշխատանքային գրքույկի պատճենը:**

6. Գնահատող հանձնաժողովի 22.01.2016թ. կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1 կետի համաձայն՝ «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված հինգ պայմանագրերից միայն երեքն են համապատասխանում «Մասնագիտական փորձառություն» չափանիշին՝ «Գրին Ֆարմ» ՍՊԸ-ի, «Աստի Թրեյդինգ» և «Գրադինվեստ» ՍՊ ընկերությունների պայմանագրերը: «Գրին Ֆարմ» ՍՊԸ-ի պայմանագրով «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն, բացի հաշվապահական հաշվառման վարման ծառայություն մատուցելուց, մատուցել է նաև այլ ծառայություն:

7. Գնահատող հանձնաժողովի 22.01.2016թ. կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն. ««Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը նախագծի ծառայությունը մատուցող խմբի գլխավոր հաշվապահի վերաբերյալ չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին»:

8. 22.01.2016թ. կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.1. կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի հայտը համարել **“ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-31/15” ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի երկրորդ գլխի «Մասնագիտական փորձառություն» չափանիշին չբավարարող և մերժել:**

4. ԳԲԽ-08/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի 05.02.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Երևան Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 18.02.2016թ. թիվ 88 գրությունը և վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ **հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:**

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները**, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակցիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

Նույն կետի 2-րդ պարբերության համաձայն՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերլուծելով վերը նշված իրավական նորմերը, ակնհայտ է, որ Հանձնաժողովը **ուսումնասիրում է** մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա **գնահատում է** դրանց

համապատասխանությունը և միայն դրանից հետո տալիս է մասնակցին արձանագրված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:

Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացվել են ներքոհիշյալ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր՝

- ✓ գլխավոր հաշվապահի բարձրագույն կրթության վկայականը.
- ✓ նախկինում իրականացված պայմանագրերի պատճենները, մասնավորապես՝
 - «Գրին ֆարմ պլուս»,
 - «Գրին Ֆարմ»,
 - «Գրադինվեստ»,
 - «Աստի Թրեյդինգ» ՍՊԸ ընկերությունների
 - «Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Նեցուկ» ՍՊԸ-ի միջև կնքված:

Հանձնաժողովը 19.01.2016թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով որոշում է կայացրել «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ից պահանջել մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հաշվապահական խմբի գլխավոր հաշվապահի աշխատանքային գրքույկի պատճենը:

Այսինքն, ըստ էության, Պատվիրատուն ուսումնասիրել է մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, գնահատել է դրանք և դրանցում արձանագրված անհամապատասխանություն է համարել միայն գլխավոր հաշվապահի աշխատանքային գրքույկի բացակայությունը, ինչից հետևում է, որ մյուս փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանություններ առկա չեն եղել:

Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջված փաստաթուղթը, ինչից հետո Հանձնաժողովը պետք է առաջնորդվեր Կարգի 52-րդ կետի պահանջներով և գնահատեր նախկինում արձանագրված անհամապատասխանության շտկված լինել կամ չլինելու հանգամանքը, ապա ընդուներ համապատասխան որոշում՝ Ընկերության հայտը բավարար կամ անբավարար գնահատելու վերաբերյալ:

Հանձնաժողովի 22.01.2016թ. կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն. ««Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի ներկայացված փաստաթղթերը նախագծի ծառայությունը մատուցող խմբի գլխավոր հաշվապահի վերաբերյալ չեն համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին»:

Նման պայմաններում, Հանձնաժողովի կողմից որևէ կերպ չի հիմնավորվել, թե ծառայություն մատուցող խմբի գլխավոր հաշվապահի վերաբերյալ ներկայացված

փաստաթղթերը հատկապես տեխնիկական բնութագրի որ պահանջներին չեն համապատասխանում: Թերևս անհասկանալի է, արդյոք այդպիսի որոշումը վերաբերվում է նախկինում արձանագրված անհամապատասխանությունը Ընկերության կողմից շտկված կամ չշտկված լինելուն և նման շտկման ոչ բավարար լինելուն, թե, այնուամենայնիվ, տեխնիկական բնութագրով վերջինիս առաջադրված որևէ այլ պահանջի:

Պետք է նկատել, որ Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրի **գնվող ապրանքի, ծառայության կամ աշխատանքի** հատկանիշները, այլ ոչ թե սահմանի ծառայությունը մատուցող անձի աշխատանքային ռեսուրսի նկարագիրը («....վերոհիշյալ աշխատանքները իրականացնող աշխատակազմի գլխավոր հաշվապահը պետք է ունենա բարձրագույն ֆինանսական կրթություն, առնվազն 5 տարվա հաշվապահական ստաժ, հաշվապահական միջազգային ստանդարտների որակավորումով»), ուստի գնման առարկայի տեխնիկական բնութագրում աշխատանքային ռեսուրսներին վերաբերող և վերջինիս բնութագրող հատկանիշի նշումը չի համապատասխանում Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Ավելին, Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով պահանջ կարող է սահմանվել միայն նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների դեպքում, ինչպես նաև նաև այն գնումների դեպքում, երբ ՀՀ գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն՝ կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, ինչը տվյալ դեպքում առկա չէ:

Այնուհանդերձ, գնահատող հանձնաժողովի կողմից մասնագետի աշխատանքային ստաժը Հրավերի պահանջներին անհամապատասխան գնահատելու կապակցությամբ հայտնում ենք, որ, նախ, տեխնիկական բնութագրում նշված «հաշվապահական ստաժ» հասկացությունը որևէ իրավական ակտով սահմանված չէ, հետևաբար, հաշվի առնելով ՀՀ կառավարության 08.08.2013թ. թիվ 1048-Ն որոշումը, այն պետք է դիտարկվի նույն որոշմամբ սահմանված «հաշվապահի համար մասնագիտական ստաժ» (աշխատանքային փորձ) հասկացության շրջանակներում:

Հանձնաժողովը 22.01.2016թ. նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված հինգ պայմանագրերից միայն երեքն է գնահատել համապատասխանող «Մասնագիտական փորձառություն» չափանիշին, այն է՝ «Գրին Ֆարմ» ՍՊԸ-ի, «Աստի Թրեյդինգ» և «Գրադինվեստ» ՍՊ ընկերությունների հետ կնքված պայմանագրերը: Ըստ վերոհիշյալ որոշման՝ «Գրին Ֆարմ» ՍՊԸ-ի պայմանագրով «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ն, բացի հաշվապահական հաշվառման վարման ծառայություն մատուցելուց, մատուցել է նաև այլ ծառայություն:

Նման պայմաններում ակնհայտ է, որ Հանձնաժողովը, արձանագրված անհամապատասխանությունների շտկումը բավարար կամ անբավարար գնահատելու փոխարեն, ոչ իրավաչափորեն անդրադարձել է որպես որակավորման չափանիշները հիմնավորում ներկայացված մյուս փաստաթղթերի գնահատմանը, մինչդեռ դրանց գնահատումը արդեն իսկ պետք է կատարված լիներ անհամապատասխանություններ արձանագրելուց առաջ և Ընկերությանը տրվեր շտկելու հնարավորություն, եթե Հանձնաժողովը Կարգով սահմանված փուլում գնահատեր մասնագիտական չափորոշիչները հիմնավորող պայմանագրերը և արձանագրեր դրանցում իբրև առկա անհամապատասխանությունները, Ընկերությունը զրկված չէր լինի դրանք շտկելու հնարավորությունից:

Բացի այդ, Հանձնաժողովի կողմից կայացված որոշումից անհասկանալի է, արդյոք առհասարակ, գնահատման առարկա դարձվել են ներկայացված մյուս երկու պայմանագրերը, թե ոչ, և եթե այո, ապա հատկապես ինչպիսի հիմնավորումներով վերջիններս չեն գնահատվել համապատասխան, այն դեպքում, երբ Հանձնաժողովը ունեցել է օբյեկտիվ հնարավորություն ներկայացված բոլոր պայմանագրերը համապատասխանող կամ անհամապատասխանող գնահատելու:

Այսպիսով, ներկայացված հինգ պայմանագրերից համապատասխան են գնահատվել հետևյալ երեքը՝

- «Գրին Ֆարմ»,
- «Գրադինվեստ»,
- «Աստի Թրեյդինգ» ՍՊ ընկերությունների և «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի միջև

կնքվածը:

Այսինքն, կարելի է ենթադրել, որ մյուս երկուսը անհամապատասխան են եղել, թեպետ դրա մասին բացակայում է որևէ հիմնավորում, բացի հետագայում սույն բողոքի

շրջանակներում Պատվիրատուի կողմից ներկայացված դիքորոշման մեջ ներառվածներից, որի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ներկայացված «Գրին Ֆարմ Պյուս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը անհամապատասխան է համարվել վերջինիս իրավահաջորդ «Եվրո Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից կնքված լինելու պատճառով, իսկ 22.01.2016թ. կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետով բավարար գնահատված «Գրադինվեստ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում հաշվապահական հաշվառումից բացի, մատուցվել է նաև այլ ծառայություններ, ուստի և Հանձնաժողովը համապատասխան է գնահատել միայն պայմանագրի հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման մասով, մինչդեռ սրա մասին որևէ նշում ընդունված որոշման մեջ առկա չէ:

Անդրադառնալով «Գրադինվեստ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիր մասնակի համապատասխանող ճանաչելու պնդմանը, նշենք, որ ներկայացված փաստաթղթերը կարող են գնահատվել համապատասխանող կամ ոչ, դրանց մասնակի համապատասխանող ճանաչման իրավական հնարավորություն օրենսդրությամբ նախատեսված չէ, և բացի այդ, նույնիսկ այդպիսին գնահատելու դեպքում Հանձնաժողովի կողմից պետք է դրա մասին առնվազն նշում կատարվեր տվյալ որոշման հիմնավորման մասում, ինչը տվյալ դեպքում, առհասարակ, բացակայում է Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներից ցանկացածում:

Բացի այդ, Պատվիրատուն գնահատելով «Գրադինվեստ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի համանմանությունը, պարտավոր էր ղեկավարվել Կարգի 69-րդ կետի պահանջներով, որի համաձայն գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ **համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում**, իսկ հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը **մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:**

Ինչ վերաբերվում է «Գրին Ֆարմ պյուս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը վերջինիս իրավահաջորդ «Եվրո Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից կնքված լինելուն, ապա «Սահմանապակ պատասխանատվության ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կնիք ունենալու պարտականությունը հայեցողական է և չի պարունակում որևէ իմպերատիվ կարգավորում, ուստի և կնիքը, առհասարակ, պայմանագրի իսկությունը գնահատելու հիմքում դրվել չէր կարող, վերջինիս իսկությունը

հնարավոր էր ստուգել բացառապես դրան կից պայմանագրի եղելությունը հավաստող փաստաթղթերի միջոցով:

Միևնույն ժամանակ պայմանագրի իրավաչափությունը հնարավոր է գնահատել դրա համար օրենսդրությամբ առաջադրված պարտադիր պայմաններին համապատասխանության միջոցով, իսկ նշյալ պայմանագիրը բավարարել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով գրավոր գործարքին ներկայացվող պահանջներին, այն է՝ գրավոր գործարքը պետք է կնքվի փաստաթուղթ կազմելու միջոցով, որն արտահայտում է գործարքի բովանդակությունը և ստորագրված է գործարք կնքող անձի կամ անձանց կամ նրանց կողմից պատշաճ ձևով լիազորված անձանց կողմից:

Հանձնաժողովը 22.01.2016թ. կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.1. կետի համաձայն՝ որոշել է «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի հայտը համարել «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-31/15» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի առաջին մասի երկրորդ գլխի **«Մասնագիտական փորձառություն» չափանիշին չբավարարող** և մերժել:

Այսպիսով ստացվում է, որ Հանձնաժողովը գնահատման առարկա է դարձրել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, արձանագրել դրանում առկա անհամապատասխանությունը (աշխատանքային գրքույկի բացակայություն) և տվել այն շտկելու հնարավորություն, իսկ դրանց շտկված լինել չլինելու և նման շտկման պայմաններում հայտը բավարար կամ անբավարար գնահատելու փուլում անդրադարձել է նաև մյուս հիմնավորող փաստաթղթերի (ներկայացված պայմանագրեր) գնահատմանը, դրանցում հայտնաբերել անհամապատասխանություններ, ապա դրանք շտկելու հնարավորություն չտալով, այդպիսի հիմքով մերժել է Ընկերության կողմից ներկայացված հայտը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատվիրատուի կողմից խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները՝ առաջարկում ենք «Նեցուկ ԱՍ» ՍՊԸ-ի՝ 05.02.2016թ. «Երևան Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հաշվապահական հաշվառման վարման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-31/15» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունվարի 22-ին թիվ 6 արձանագրության 1.1 և 1.2 կետերով կայացված որոշումը դադարեցնելու պահանջի մասին բողոքը բավարարել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝




Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝

Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչ՝



Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-08/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Մ. Մանուկյան